9(91.57)
Ա-78

Ա. ԱՎԴԱԼ

ԱՐՑԱՆ ՎՐԻԺԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԴԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՆՐԱ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Առանձնատիպ Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Պետական պատմական
թանգարանի «Աշխատություններից»,
հատոր IV, 1952 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1952

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ ИСТОРИЧЕСКИЙ МУЗЕЙ АН АРМ. ССР

Աշխատություններ № 4, 1952 Труды

ԱՄԻՆԵ ԱՎԴԱԼ

ԱՐՅԱՆ ՎՐԻԺԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԴԵՐԻ ՄԵՋ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Արյան վրիժառության սովորությունը Քրդերի մեջ

Արյան վրիժառությունը հասարակական փոխհարաբերության երևույթներից մեկն է, որն աղերսվում է սեփականատիրության հետ։

Տոհմային հասարակության մեջ, արտադրական ուժերի զարգացման հետևանքով ստեղծվում են հավելյալ մթերքներ։ Գոյության համար մղված պայքարում այդ մթերքները հափշտակելու նպատակով տոհմերը հարձակվում էին միմյանց վրա։ Այստեղից էլ ծագել է վրեժխնդրությունը։ Այս երևույթն ավելի ցայտուն է դառնում դասակարգային հասարակության մեջ, երբ ուժեղանում է մասնավոր սեփականությունը և տիրող դասակարգի ձեռքում դառնում է ճնշման ու շահագործման միջոց։

Վրիժառությունը հասարակական ընդհանուր երևույթ է եղել տոհմերի և ցեղերի համար. վերջիններիս անդամների համար դա համարվել է իրավունք և պարտականություն։

Քրդերի մեջ ևս տոհմի անդամն իր տոհմակիցների հետ, կամ ինքն անձամբ պարտավոր էր իր տուժած ցեղակցի արյան վրեժը լուծել. դա համարվում էր նրա սրբազան պարտականությունը։

Այժմ էլ ՍՍՌՄ-ից դուրս ապրող քրդական շատ ցեղերի մեջ վրիժառությունը համարվում է հատուցման գլխավոր միջոց և փոխարինում է պետական դատական ատյանին։

Խուն պեշ խուՆեվա, արյան փոխարեն արյուն, այդ էր հիմնական նշանաբանը, որովհետև ցեղի անդամի սպանության հետևանքով նվազում էր նրա տնտեսական և ռազմական ուժը, նույն չափով էլ, եթե չասենք ավելի, պետք էր պակասեցնել թշնամի ցեղի տնտեսական և ռազմական ուժը։

Քրդական ցեղերի սովորութային իրավունքը ոչ մի տեղ գրավոր ձևով չի ձևակերպվել, այլ սերնդե-սերունդ անցել է բանավոր կերպով, որի հիման վրա դատաբարակվել են տոհմի նոր սերունդները։

* * *

Քրդերին վերաբերող ազգագրական և ֆոլկլորային բազմաթիվ նյութերը վկայում են այն մասին, որ քրդերի մեջ արյան վրիժառությունը դարեր շարունակ համարվել է ոչ թե վրիժառուի ցանկությունը բավարարող ինչ-որ անհատական ձգտում, այլ վրիժառուի և նրա ցեղակիցների պարտքը։

Արյան վրիժառությունը երբեմն կարող էր անհաջողության մատնվել, կամ ձախողվել. այդպիսի դեպքերում հատուցման պարտականությունը ընկնում էր ցեղակից պսամամի (բարեկամի, մոտիկ մարդկանց) վրա։

Նախառևոլուցիոն շրջանում Անդրկովկասում ապրող քրդերի մեջ վրիժառուները լինում էին միայն տուժողի հոր կողմի ցեղակիցները. մոր կողմի ցեղակիցների համար որդիները պարտական չէին վրեժ լուծել թշնամուց։ Կնոջ արնակիցների վրեժը պարտավոր էին լուծել նրա հորեղբական գծով ցեղակիցները։ Բայց դա դեռ չի նշանակում, որ վրիժառությունը միշտ էլ եղել է միայն հորեղբական գծով. ընդհակառակը, հնագիտական, ազգագրական և ֆոլկլորային բազմաթիվ նյութեր կան, որոնց մեջ ցայտուն կերպով արտահայտված է մայր իշխանության հետքերը վրիժառության գործում. օրինակ՝ քրդական «Դավրեշ» կոչվող հեքիաթի մեջ վրեժն առնվում է կնոջ ձեռքով, կամ նրա թելադրանքով. հեքիաթի հերոս Դավրեշը դաշտա Սրնջարէ (Սնջարի դաշտավայրում) քեռու աղջկա վրեժը լուծում է հսկաներից՝ մոր հրամանով. նրա հոր անունը հեքիաթում չի հիշատակվում։

Քրդերի սովորության համաձայն սպանվածը հանգիստ չի առնում իր գերեզմանում, քանի դեռ նրա վրեժը չի լուծվել սպանողից կամ նրա մոտիկ ազգականից։

Արյան վրեժի սովորույթն աչքի է ընկնում Իրանի, Սիրիայի և Իրաքի քրդական Ջալալիա, Հայդարա, Գուրանիա, Մամկա, Ռամոշա, Շեխբզնիա և այլ ցեղերի մեջ, որոնք իրենց վրեժը լուծելու նպատակով երդվում են խոդայով (աստծով), Մահմեդի և Եզդու անուններով, որ երբեք հաշտություն չեն կայացնի թշնամու հետ, մինչև արյան վրեժն արյամբ չլուծվի։

Արտասահմանում Գուրանիա ցեղի մեջ մինչև այսօր էլ սովորություն կա խմել սպանված թշնամու արյունից թեկուզ մի կաթիլ։

Այստեղ տեսնում ենք ժողովուրդների հնադարյան այն հավատալիքը, որ սպանվածի արյունն ունի մոգական ուժ։ Խմելով թշնամու արյունը, որպես թե ընդունում է նրա ամբողջ ուժն ու եռանդը։ Այն հասկացողությունը կար, թե վրեժը լուծելով, սպանողը կարող է ազատվել մեռածի հալածանքներից։

Հնում քրդական ցեղերը կամ բարերը (տոհմերը) գործում էին իրենց ցեղապետների՝ բարապետների գլխավորությամբ, մեծ մասամբ առանց դատարանների և պետական կառավարչական ձևերի։ Ցեղամիջյան, ընտանեկան ամեն մի վեճ ու կռիվ կարգավորվում էր ցեղի կամ բարի ընդհանուր ժողովի կողմից։

Բարն ուներ իր խորհուրդը, որին պարտավոր էին ենթարկվել բարի բոլոր մարդիկ։ Ցեղի բոլոր հասակավոր մարդիկ, այդ թվում պառավ կանայք կարող էին մասնակցել խորհրդի նիստին, որտեղ քննվում էին գլխավորապես հողի, ջրի, արոտավայրերի, վրիժառության, դալանի և հափշտակումների վերաբերյալ գործեր, բայց խորհրդում վճռական դեր էր խաղում բարապետի խոսքը։

Այս խորհուրդը բավական նման էր իրոկեզյան տոհմերի խորհրդին, որոնց մասին մանրամասն խոսում է Ֆրիդրիխ Էնգելսն իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության մեջ։ Նա ասում է.

«Տոհմն ունի խորհուրդ, բոլոր արական և իգական հասակավոր տոհմակիցների դեմոկրատական ժողովը, որի մեջ բոլոր մասնակցողները ձայնի հավասար իրավունք են վայելում։ Այս խորհուրդն էր ընտրում սախեմներին, ռազմական առաջնորդներին և հրաժարեցնում նրանց, նմանապես և մյուս «հավատի պաշտպաններին»։ Նա էր որոշում սպանված տոհմակիցների արյան գինը, (Wergeld) կամ արյան վրեժն առնելու հարցը. նա էր օտարներին տոհմի մեջ ընդունում։ Մի խոսքով՝ նա գերագույն իշխանություն էր տոհմի մեջ»[1]։

Արյան վրեժը քնորոշելու համար կարևոր է նշել, թե քրդերի մեջ ի՞նչով են արտահայտվել արենակցական կապերը։

Այսպես, հայրն իր եղբոր և քրոջ որդիներին՝ առլադ (զավակներ) է անվանում. զավակները մորեղբորն անվանում են

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 116։

խալո (քեռի), հորեղբոր՝ ապո, հորեղբոր տղաներին՝ կոռապ, աղջիկներին՝ ղիզապ, քեռու տղաներին՝ կոռխալ, աղջիկներին՝ ղիզալ, մորաքրոջ՝ խատի, վերջինիս տղաներին՝ կոռխատի, աղջկան՝ ղիզխատի, ցեղակցին՝ պսմամ, եղբայրացած ընկերոջը՝ դատարբակ:

Քրդական ցեղի անդամներն իրենց ցեղի աղջկան անվանում են կնեգ[1]։ Այսպես են անվանում ոչ միայն միևնույն ծնողների, այլև ամբողջ ցեղի աղջիկներին։ Սակայն այս բառը հասարակական նոր հարաբերություններում ստացել է նոր բովանդակություն։ Այժմ կնեգ ասելով մեծ մասամբ հասկացվում է լավ կին, ինչպես նաև աշխատասեր և համեստ աղջիկ, անկախ նրա ցեղական կամ արենակցական կապերից։

Այս բառերը քրդերենում ոչ միայն միմյանց ազգակցությունը արտահայտելու համար են գործածվում, այլև դրանցով նշվում են ցեղակիցների և արենակիցների միմյանց հանդեպ ունեցած պարտավորությունները։ Սրանք գոյություն ունեցող հասկացություններ են, մոտիկության, հեռավորության, մի խոսքով արենակցական կապերի մասին, որոնք դարերի ընթացքում, ըստ սովորութային իրավունք, սիստեմ են դարձել ցեղակիցների կապերը ցույց տալու համար։

Արենակցական այս կապերը ստացել են կրոնական գունավորում։ Արյան վրեժը լուծելուց անմիջապես առաջ, քրդերը սովորաբար դիմում են իրենց աստծուն, ասելով. խոդե ալի բրա, պսմամա բըկա, ուակի աուանա ալըկըն (խոդե, օգնի եղբայրներին, ցեղակիցներին, որ նրանք հաղթող լինեն)։ Այդ նշանակում է, առանց աստծո օգնության դժվար էր վրեժ լուծել թշնամուց։

Հին գերման, սլավոն ու կովկասյան բազմաթիվ ժողովուրդների՝ չեչենների, լեզգիների, աբխազների, սվանների, օսերի, ինչպես նաև քրդերի մեջ արյան վրիժառությունը շղարշված է եղել կրոնական հավատալիքներով։ Կրոնական այդ հայացքները կապված են նախնիների կուլտի հետ։

Եզդի քրդերն իրենց վրեժը լուծելու համար աղոթում էին Մալաքեթաուսին։

[1] կնեգ— պարսկերեն է. նշանակում է աղջիկ, տոհմի ցեղի արենակից կին։

2. Արյան վրիժառության շարժառիթները և նրանց վերաբերյալ պատմական, ազգագրական և ֆոլկլորային նյութեր

Արյան վրիժառությունն առաջացել է՝ 1. Սեփականություն (հողամասեր, արոտավայրեր) և այլ ունեցվածք ձեռք բերելու շուրջն առաջացած պայքարից։ 2. Խանդի հողի վրա։ 3. Բռնության դեմ առաջ եկած ատելությունից։ 4. Անձնական պատվի համար։

Ինչպես գիտենք, նախկինում վարելահողերի լավագույն մասը գյուղում գտնվում էր աղաների, բեկերի և մյուս հարուստների ձեռքում։

Երկրագործությամբ զբաղվող աղաներն ու բեկերը յուրացնում էին գյուղի ջրովի և լավ հողերը, իսկ չքավոր քրդի արտերը մնում էին անջրդի։ Չքավոր քուրդը մեծ մասամբ աշխատում էր աղայի հողամասում և պահում էր նրա հոտերը, դիմացը ստանալով չնչին հատուցում. ուստի քրդերի մեծամասնությունը աղքատանում, քայքայվում էր, իսկ փոքրամասնությունն անվերջ հարստանում։ Տնտեսական այդ պայքարն առաջ էր բերում հակամարտություն և վրեժի շարժառիթ էր դառնում։

Բացի այդ, միմյանցից բաժանվող գերդաստանի անդամների միջև ևս պայքար էր առաջ գալիս սեփականության շուրջն առաջացող վեճերի հետևանքով։

Բաժանվելիս, ըստ սովորութային իրավունքի, սեփականության լավագույն մասը պետք է հասներ ավագ եղբորը. մյուս մասը բաժանվում էր հավասարապես մյուս եղբայրների միջև, իսկ երբ կրտսեր եղբայրներն աշխատում էին այդ կարգը խախտել, առաջանում էր կռիվ։

Առանձնապես մեծ կռիվներ էին տեղի ունենում արոտավայրեր ձեռք բերելու համար, գլխավորապես տարբեր ցեղերի միջև. հաղթողը (այստեղ մեծ տեղ էր գրավում նաև կաշառքը) տիրում էր իր ցանկացած արոտավայրերին, հակառակորդները դիմադրում էին. այդ պատճառով երբեմն առաջ էր գալիս մարդասպանություն։

«Քոչելով (անցնելով) սահմանը,— ասում է Վասիլկովը,— և ընտրելով հարմար արոտավայրեր, Պարսկաստանի քրդերն անցնում են թյուրքերի սահմանը, Թյուրքիայի քրդերը նրանց չեն թողնում, այդ պատճառով նրանց մեջ տեղի են ունենում զինված ընդհարումներ. ուստի այդ ընդհարումների հետևանքով սկսվում է թշնամություն՝ առաջ բերելով արյան վրիժառություն»[1]։

[1] Отчет о поездке по губернаторствам западной Персии, Тифлис, 1903, стр.43.

Արոտավայրեր ձեռք բերելու նպատակով մի պետության սահմանից մյուսն անցնելն այնքան էլ հեշտ չէր լինում քրդի համար, որովհետև այնտեղ էլ նա այդ արոտավայրերը նվաճելու էր տեղական քրդերից։

Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղի բնակիչ Հուսո Հաջոյանը պատմում է, որ Թալինի շրջանի Քալաշբեկ գյուղում ապրող քրդական նույն ցեղին պատկանող կուլակ Շամսեն կաշառքով տիրել էր իր ցեղակից չքավոր Հսեի հողերին։ Հսեն դիմել էր գյուղի ռիսպիին (քյոխվային) և ապա վերադաս մարմիններին, բայց բան դուրս չէր եկել։ Հսեն հունձի ժամանակ դաշույնի հարվածով սպանել էր Շամսեին և դրանով վրեժխնդիր եղել։

Հնում նման դեպքերի թիվը քիչ չէր։ Հող, ջուր ու արոտավայրեր ձեռք բերելու համար տեղի ունեցած ցեղամիջյան և ներցեղային կռիվներում սպանվում էին մեծ թվով մարդիկ։

Արյան վրիժառությունը քրդերի մեջ բոլոր դեպքերում չէր, որ արտահայտվում էր միայն սպանությամբ, այլ հաճախ ի հայտ էր գալիս նաև մի շարք ուրիշ միջոցներով. երբեմն թշնամի կողմերը աշխատում էին միմյանց նաև նյութական վնաս հասցնել՝ գողանալ ունեցվածքը, այրել խոտի դեզերը, ղալախը (աթարի կույտը), թունավորել անասուններր և այլն։

Հաճախ արյան վրիժառության աղբյուր էին հանդիսանում նաև քրդուհուն ամուսնացնելու ժամանակ ղալանի համար առաջ եկած վեճերն ու անհամաձայնությունները, որոնք երբեմն պատճառ էին դառնում առևանգման։

Քուրդ երիտասարդն իր սիրած աղջկան կամ կնոջն առևանգելուց հետո պետք է կրկնակի ղալան վճարեր, եթե այդ բանին համաձայն էին աղջկա ծնողները կամ կնոջ նախկին ամուսինը, իսկ եթե ղալանը կրկնակի չէր վճարվում և հանդիսավոր կերպով հաշտություն չէր կայանում, այդ դեպքում երկու կողմերի միջև առաջ էր գալիս թշնամություն, որի հետևանքով ամբողջ ցեղեր (աղջկա և տղայի արնակիցները) ընդհարվում էին միմյանց հետ, սպանվում էին տասնյակ, նույնիսկ հարյուրավոր մարդիկ։

Տոհմային հասարակության մեջ, կին առևանգող տղամարդու ընկերները, ըստ սովորութային իրավունքի, հերթով կենակցում էին առևանգված կնոջ հետ և ապա նրան հանձնում բուն առևանգողին. այս սովորության հետքերն այժմ տեսնում ենք Իրանում ապրող «Գուրանի» քրդական ցեղի մեջ, որտեղ առևանգողներն առևանգված կնոջ հերթով տանում են իրենց տները և վերջում

հանձնում նրան՝ ում համար առևանգել են, բայց իրենք այս դեպքում չեն կենակցում կնոջ հետ։ Առևանգողների այդ խումբը քրդերեն լեզվով կոչվում է ճավալտի (ընկերություն)։

Քրդերի մեջ առևանգման երևույթը առաջ էր գալիս հիմնականում հետևյալ շարժառիթներից։

1. Երբ փեսան չքավոր էր և գլխագինը չէր կարողանում վճարել։

2. Երբ հակառակ աղջկա կամքին, ծնողներն ուզում էին նրան ամուսնացնել մի տարիքավոր հարուստ մարդու հետ, որը մեծ գլխագին էր տալիս աղջկա համար։ Նշանված աղջիկը չսիրած մարդուց ազատվելու համար փախչում էր իր սիրած երիտասարդի հետ։ Աղջկա նշանածի և առևանգողի միջև ծագում էր թշնամություն։

3. Երբ աղջիկն ունենում էր իր սիրած տղան, բայց աղջկան սիրող մի այլ տղա առևանգում էր նրան։

4. Երբ աղջկան և տղային նշանում էին օրորոցային հասակում (բեշիկքյարթմա անում), բայց աղջիկը մեծանալուց հետո տղային չէր սիրում և փախչում էր իր սիրած մի այլ երիտասարդի հետ։ Այդ դեպքում նշանված տղան պետք է վրեժխնդիր լիներ փախցնողից, այլապես կանայք նրան ծաղրում էին, ասելով—ժնա՛, մեր նինա՛ (կին է, տղամարդ չի), ճանկա ժնա սարետա (կնոջ լաչակը գլխին) և այլն։

5. Երբ ամուսինն անդամալուծությունից զուրկ էր լինում, կինը փախչում էր մի այլ տղամարդու հետ։ Ըստ սովորութային իրավունքի, երբ ամուսինը առնականությունից զուրկ էր լինում, նա կարող էր իր կնոջը մինչև 7 տարի պահել տանը, որից հետո եթե տղամարդու առնականությունը չէր վերականգնվում, կինն ազատ կարող էր վերադառնալ իր հոր տունը։ Սակայն, երբ կինը 7 տարի առնականությունից զուրկ ամուսնու տանը չէր ուզում սպասել, փախչում էր իրեն սիրող մի այլ տղամարդու հետ, նոր ամուսնուց պետք է վրեժխնդիր լիներ նախկին ամուսինը։

6. Երբ աղջիկը սիրում էր մի այլ ցեղի պատկանող տղայի, բայց որպեսզի նա նա̈քա̈վ խա̈րիրիե (օտարություն չգնա), հակառակ նրա կամքին ամուսնացնում էին իրենց ցեղի տղաներից մեկի հետ։ Այդպիսի դեպքերում մյուս ցեղի տղան պետք է վրեժխնդիր լիներ այդ բանի համար։

Այս սովորությունը հնում գոյություն է ունեցել բազմաթիվ ցեղերի մեջ, ինչպես օրինակ՝ հին Հունաստանի պելազգների մեջ.

տոհմը կամ ֆրատրիան իր սեփականությունը (աղջկա օժիտը, որ բավական շատ էր) չկորցնելու համար իր աղջկան բռնությամբ ամուսնացնում էր իր ցեղակից տղամարդկանցից մեկի հետ։

Ուրեմն, հակառակ քրդուհու ցանկության, նրան ամուսնացնելն իր ցեղակից չսիրած մարդու հետ, ատելություն էր առաջ բերում նրա մեջ ընդդեմ իր ցեղակիցների։ Քրդուհին փախչում էր իր սիրած տղայի հետ։ Կնոջ փախուստի հետևանքով ծագում էր թշնամություն։

Քրդերի մեջ գոյություն ունեցող առևանգման և վրիժառության մնացուկների մասին մինչև այժմ գրավոր տեղեկություններ չեն գտնվել. մեր ուսումնասիրությունը կատարել ենք անցյալում քրդերի մեջ գոյություն ունեցող սովորությունների և ֆոլկլորային նյութերի հիման վրա։

Հնադարյան այս սովորության մնացուկները սովետական պայմաններում, տնտեսական և սոցիալական նոր հարաբերությունների հիման վրա քրդական կոլտնտեսային գյուղում հիմնականում վերացան։ 1930 թվականից հետո իսպառ վերացել է ամուսնության բեշիկքյարթմա ձևը և այժմ աղջիկներն ամուսնանում են սովետական օրենքների հիման վրա, 16 տարին լրանալուց հետո՝ իրենց ցանկությամբ։

Քրդական նահապետական սովորություններից մեկն էլ, որ անմիջապես կապ ունի առևանգման հետ և մեծ նշանակություն ունի վրիժառության դրդապատճառները պարզաբանելու համար մալա խոյկբրնե (ապաստարանի) խնդիրն է։

Քրդուհուն առևանգողը 15—20 օր թաքնվում էր մալա խոյկբրնե-ում մի հարուստ և անվանի մարդու տանը, որպես ապահով տեղ, տան տիրոջ հովանու ներքո։ Այդ հյուրընկալումը ոչ միայն ապաստարան էր առևանգողի համար իրեն հալածողներից խույս տալու համար, այլև այդտեղ տեղի էին ունենում հաշտության բանակցությունները։

Մալա խոյկբրնե-ում ոչ ոք իրավունք չուներ ձեռք բարձրացնել այդտեղ ապաստանվողների վրա։ Տան տերը պատրաստ էր արյան գնով պաշտպանել իրենց մեվանե մալե (տան հյուրին), որովհետև մեվան մեվանե խոդեյ (հյուրն աստծունն է)։

Հյուրընկալության այս սովորությունը հնում տարածված է եղել տոհմային կյանքով ապրող համարյա աշխարհի բոլոր ժողովուրդների մեջ։

«Այս սովորությունը,—ասում է Օստրովիտյանովը,—եղել է նախնադարյան մարդկանց փոխադարձ օգնության տեսակներից

մեկը, սպառման առարկաներով ապահովելու գործում որոշ հավասարեցման մի տեսակը»[1]։

Թշնամության և վրիժառության աղբյուրներից մեկն էլ խանդն էր, որը սկզբնական շրջանում, ինչպես առևանգումը, առաջացել է մենամուսնության ժամանակ և բխում է սեփականատիրական զգացմունքից։ Խանդը գոյություն ունի բոլոր ժողովուրդների մեջ, բայց նրա արտահայտության ձևերը կապված են տեղական սովորությունների հետ։

Հնում, քրդերի մեջ, եթե կնոջ անհավատարմության դեպքում ամուսինը նրան չէր սպանում, այլ բաժանվում էր նրանից, կինը պարտավոր էր սպասել, մինչև իր ամուսնու կրկին ամուսնությունը և հետո ինքը ամուսնանար։

Անձնական վիրավորանքն ու անպատվությունը ևս աղբյուր է հանդիսացել թշնամության և հետևապես վրիժառության։

Եթե մեկը վիրավորում էր մյուսի անձնական պատիվը, տուժողի առաջնահերթ գործն էր լուծել իր վրեժը։ Այդ հարցում հատկապես մեծ տեղ էր տրվում կնոջ պատվին. օրինակ, մեծ ապավորություն էր թողնում կնոջ ոտաշոր փախցնելը։ Վրիժառուն այդ անում էր իբրև ապացույց թշնամու կնոջ պատիվն արատավորելու և իր վրեժը լուծած լինելու համար։ Եթե որևէ մեկը բռնաբարում էր իր թշնամու կնոջ, նրա նպատակը ոչ միայն իր անասնական կրքերին հագուրդ տալն էր, այլև վրեժն առնելու դիտավորությունը։ Այդ նպատակով նա իր արածի մասին հայտնում էր իր շրջապատի մարդկանց, որպեսզի այդ լուրը տարածվեր և ընդհանրանար։

Երբ առագաստի գիշերը պարզվում էր, որ նորահարսն անարատ չէ, այդ դեպքում փեսան ստիպում էր հարսին խոստովանել հանցանքը և չխոստովանելու դեպքում փեսան վրեժը լուծելու նպատակով տեղն ու տեղը սպանում էր նրան, կամ հետևյալ օրը հայտնում էր ժողովրդին, որ բուկն (հարսը) աննամուս է, որից հետո ծեծում էին հարսին, նրա դեմքը մրոտում, հակառակ ձևով նստեցնում էշի վրա և վերադարձնում հոր տունը[2]։

---

[1] Կ. Վ. Օստրովիտյանով, Ակնարկներ մինչ-կապիտալիստական ֆորմացիաների էկոնոմիկայի մասին, Երևան, 1948, էջ 24։

[2] Առագաստի առաջին գիշերը փեսայի կողմի երկու տարեց կին կանգնում էին նորապսակների սենյակի կամ վրանի առաջ իրբև պահակ՝ չար ոգիներին քշելու և հարսի անարատությունը ստուգելու նպատակով։

Ընդհանրապես, ինչպես քուրդ տղամարդը, նույնպես քըրդուհին վրիժառու է եղել: Մարդասպանության դեպքում, եթե վրեժ լուծողն անմիջապես ինքը կինը չէր, նա պահանջում էր, որ իր ամուսինը լուծի իր վրեժը. հանգիստ չէր տալիս ամուսնուն և մյուս մոտիկ մարդկանց, ծաղրում էր այն տղամարդուն, որը փախչում էր թշնամուց. դրա համար կինն ասում էր իր վախկոտ ամուսնուն. տու մեր նինի, լե ժընի (դու տղամարդ չես, այլ կին): Ազգականներից մեկին ու մեկի սպանության դեպքում, քրդուհին աշխատում էր նրա վրեժը լուծել: Ակնարկելով տղամարդուն, նա ասում է. չը ազ չը տու, խունա մայակա, զարւկամ նայփե նըլինն (ինչ ես, ինչ դու, մեր արյունը մեկ է, մենք պետք է վրեժ լուծենք):

Վրիժառության շուրջը քրդերի մեջ հյուսվել են բազմաթիվ ժողովրդական վեպեր և վիպերգեր:

Քրդական «Մամե Շանկե» ավանդական վեպի մեջ դավաճանությամբ սպանված հերոսի կինը լուծում է ողբերգական մահով մեռած իր ամուսնու վրեժը չարանենգ թշնամուց, խմում է նրա արյունը և հրամայում ողջ-ողջ թաղել նրան:

«Բրինդարմ» (վիրավոր եմ) երգի մեջ քրդուհին վրիժառու է իր որդուն սպանող թյուրք պաշտոնյայի հանդեպ. նա ծաղրելով վախկոտ ամուսնուն, պատրաստակամություն է հայտնում սպանված որդու վրեժն իր ձեռքով լուծելու: Նա երգում է՝

Վա՜յ, վա՜յ, տասն անգամ կուրանամ,
Այսօր կռիվ է պատահել Արաղա դաշտում,
Մեր գյուղի վրայից գնդակներ են սուլում:
Աստված սպանի թշնամու որդուն,
Նա գնդակով սպանեց իմ որդուն՝
Ցավը մնաց իմ սրտում:
Վա՜յ, վա՜յ, տասն անգամ կուրանամ,
Մի հրացան տվեք ձեռքս,
Առավոտից մինչև իրիկուն
Կռվեմ և լուծեմ դադոյիս վրեժը[1]:

Վրիժառությունը երբեմն էլ արտահայտվել է անեծքի և բողոքի ձևով: Մնոտիապաշտ, բայց արնակից չունեցող և տնտեսապես

[1] Ասաց Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ, այժմ հանգուցյալ, Անձե Զոլոն 1940 թվականին:

քայքայված քուրդը հաճախ չէր կարող իր վրեժը լուծել թշնամուց. այդ պատճառով նա խնդրում էր աստվածներին, որ նրանք պատժեն իր թշնամուն: Դա մեծ մասամբ արտահայտվում էր քըրդուհու անեծքով իր թշնամու նկատմամբ. նա ասում էր. յա եզդի, խոդե, տու բալակե դըժմընե մընրա բինի (յա եզդի, խոդե, դուք պատժեցեք իմ թշնամուն): Նա չէր խնայում նույնիսկ իր ծնողներին, եթե նրանք իրեն ծախում էին որևէ հարուստ ծերունու:

Քրդուհու արտահայտած բողոքն ընդդեմ իր անողոք ծնողների, կարելի է գտնել «Ամինա Հասո» երգի մեջ, որտեղ աղջիկը դառնությամբ լցված ծնողների հանդեպ, որոնք մեծ գլխագին ստանալու համար՝ առանց նրա կամքը հաշվի առնելու, տվել են «Աղայե կալի ֆոլոզ գյանի» (հոտած քոսոտ ունեցող աղային):

Ահա այդ երգից մի քանի տող.

Ախ սիրահարված Ամինա եմ, սիրով տարված,
Ադամի[1] աղջիկները ծիծաղեցին բախտիս վրա,
Թող աստված անիծի հորս ու մորս,
Ինձ չտվին սիրած Ահմադիս,
Այլ տվին հոտած քոսոտավոր ծերուկ աղային[2]:

Ինչպես տեսնում ենք, վիրավորված քրդուհին գիտակցում է, որ ինքն իր ծնողների համար դարձել է վաճառքի առարկա. հակառակ իր մարդկային զգացմունքների, նա ծախվել է հարուստ ծերուկին: Սա վրեժով լի քուրդ կնոջ անեծքն է, իր շրջապատի անարդարության դեմ:

Երբեմն քրդուհին ինքն էր իր համար ուղի գտնում այդ անարդարությունից դուրս գալու: Նա փախչում էր իր սիրած երիտասարդի հետ կամ ինքնասպանությամբ վերջ տալիս իր կյանքին:

Քրդերի մեջ վրեժը լուծելու համար ժամանակի տևողությունն էական նշանակություն չուներ: Այս սովորությունը տեսնում ենք նաև կորսիկացիների, իռլեդների, օսերի և բազմաթիվ այլ ցեղերի և ժողովուրդների մեջ: Թշնամությունը կարող էր անցնել սերնդից սերունդ, մինչև նրա լիակատար լուծումը:

Ղուկաս վ. Ինճիճյանը քրդերի թշնամության մասին գրել է.

[1] Ադամի աղջիկները. Ադամից սերված աղջիկները:

[2] Ասել է Ապարանի շրջանի Ալագյազ գյուղի բնակիչ Ա. Զոլոն, գրի է առնվել 1939 թվականին:

«Սոքա որպէս և այլ քուրդք եթէ սպանիցեն զոմ հարկիւ սպանանին զոք ի նոյն ցեղէ, թէև անցին 100 ամք»[1]։

Քրդերը տոհմերով կամ ցեղերով կազմում էին աշիրաթներ. յուրաքանչյուր աշիրաթի գլխին կանգնած էր իր ավագ աղան։ Աշիրաթները մարդկանց թվով հավասար չէին. կային աշիրաթներ, որոնց մեջ հաշվվում էր երեք հազար ծխից ավելի[2]։

Անդրկովկասում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից առաջ կային քրդական բազմաթիվ ցեղեր, որոնք շարունակ ընդհարման մեջ էին միմյանց հետ. սրանք ապրում էին քոչվորական կյանքով, զբաղվում էին մասամբ նաև երկրագործությամբ, փոքր չափով էլ տնայնագործությամբ։

Քրդերի դրությունն առանձնապես վատթար էր Սուլթանական Թյուրքիայում։

Սուլթանական Թյուրքիայի կառավարությունը քրդերի մեջ ազատագրական պայքարը թուլացնելու նպատակով և նրանց միմյանց դեմ լարելու համար ոչ մի միջոց չէր խնայում։

Թյուրքիայում Սուլթան Համիդը քրդերի մեջ այնպիսի դրություն էր ստեղծել, որ մինչև անգամ հարազատ եղբայրները «հրացանի լուլեն» իրարից չէին հեռացնում։ Այդ մասին է «Քլամա Սուլթան Համիդ»-ը (Սուլթան Համիդի երգը), որի մեջ քուրդ ժողովուրդն իր զայրույթն է արտահայտում Սուլթան Համիդի դեմ։

Ահա այդ երգից մի քանի տող.

Մի կռիվ է պատահել Խլաթից վերև։
Թող քանդվի Սուլթան Համիդի տունը,
Նա լարեց իրար դեմ աշիրաթներին։
Մի կողմից թալան, սպանություն,
Մի եղբայրը մյուս եղբոր դեմից
Թվանքի լուլեն չի հեռացնում[3]։

Քրդական ցեղապետներն իրենց ցեղի ներքին գործերում կատարյալ միահեծան իշխանավորներ էին. նրանք կարող էին պատժել հանցագործին, ծեծել, ցեղի միջից հեռացնել և նույնիսկ

[1] Ինճիճյան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն երկրորդ, Վենետիկ, 1806, էջ 202։

[2] Известия штаба Кавказского военного округа, Тифлис, 1907, стр. 4.

[3] Ասել է Աշտարակի շրջանի Զաթղռան գյուղի բնակիչ Օթարե Շառոն, գրի է առնվել 1946 թ.։

սպանել՝ առանց երկյուղի, որ կարող են պետության կողմից պատասխանատվության ենթարկվել։

Քուրդ ցեղապետների թելադրանքով քրդերը երբեմն ընդհարումներից հետո, առանց դատ ու դատաստանի, վճիռներ ու հաշտություն էին կայացնում իրար մեջ։

«Մեր վարչությունը (ցարական կառավարությունը),—ասում է պրոֆ. Ա. Եղիազարյանը,—նախկինում հազվագյուտ դեպքերում էր խառնվում եզդիների ներքին կարգ ու կանոններին։ Մինչև նրանց քրեական գործերի դատարան հասնելը, հաճախ դրանք վերջանում էին հաշտությամբ»[1]։

Քուրդ ցեղապետներն իրենց «ցեղակիցներից» ստանում էին մի շարք եկամուտներ. բացի այդ, պետության կողմից նշանակված հարկերի մի մասը նրանք էին յուրացնում։

Հաճախ էր պատահում, երբ քրդերը տեսնում էին, որ իրենց ցեղապետը պաշտպանում է հակառակորդ ցեղի աղայի՝ ցեղապետի շահերը, կաշառված է նրանց կողմից, կամ իր ցեղի սպանված անդամի վրեժն առնելու համար թշնամական հարաբերությունների մեջ չի մտնում թշնամի ցեղի հետ։ Այս դեպքում ցեղի վրիժառու անդամները թշնամական դիրք էին բռնում իրենց ցեղապետի նկատմամբ և առաջին հերթին վրեժ լուծում նրանից։

Այսպիսով, խորանում էր ներցեղային պայքարը, որը հետզհետե ցեղի վերնախավը բաժանում էր նրա աշխատավոր մասսայից։

Քրդական հասարակական կյանքում արյան վրիժառության հողի վրա դարեր շարունակ քայքայվում էին բազմաթիվ ընտանիքներ։ Քուրդ աշխատավորությունը կրում էր տնտեսական և բարոյական բազմաթիվ վնասներ, ավերածություն և անարգանք։ Ցեղամիջյան կռիվներում ամենից առաջ տուժում էին չքավոր քրդերը և շահում ցեղապետներն ու աղաները։

3. Վրիժառությունը դաստաբրակությամբ

Քրդական հին սովորություններից մեկն էլ եղբայրանալով (դաստաբրակությամբ)[2] վրեժ առնելն էր։

[1] А. Егиазаров, Внутреннее управление наших езидов до реформы 60—х гг. Записки кавказского отдела Императорского русского геогр. общества. КН. XIII. вып. 2, Тифлис, 1891, стр. 202.

[2] Դաստաբրակ—բարդ բառ է, բաղկացած է դաստ (ձեռք) և բրա (եղբայր) բառերից, որ նշանակում է ձեռքի եղբայր, ասել է թե եղբայրակից, արյան եղբայր կամ հայոց դավառաբարբառներում «ողջում ախպեր»։

Եղբայրացողներն, իբրև պարտականություն պետք է իրենց վրեժը լուծեին թշնամուց, որովհետև ըստ սովորության, եղբայրանալուց կամ քույր ու եղբայր դառնալուց հետո նրանք համարվում էին միևնույն ծնողների զավակներ։

Ուստի նրանք իսկական եղբոր բոլոր պարտավորությունները պետք է կատարեին։

Այս սովորությունը գոյություն է ունեցել հնադարյան բազմաթիվ ցեղերի և ժողովուրդների, այդ թվում նաև սլավոնական ժողովուրդների մեջ, որպես նրանց սովորութային իրավունքի հիմքերից մեկը։ Ռուսների побратимство-ն կազմված էր երկու կամ ավելի անձնավորությունների, մի կամ երկու սեռից, փոխադարձ սիրո հիման վրա։

Սլավոնական побратимство-ն գերմանական die verbrüderung հայկական «եղբայրակցություն» կամ «ողջում ախպեր», քրդական դաստաբրակի կամ խուշկու բրատի (քույր և եղբայր) հնադարյան տոհմական սովորությունն է, որի մնացուկներն այժմ վերացել են Սովետական Միության մեջ ապրող քրդերի միջից։

Հերոդոտի վկայությամբ, 5-րդ դարում (մ. թ. ա.) Սև ծովի հյուսիսային ափերին ապրող սկյութացիների մեջ նույնպես գոյություն է ունեցել «եղբայրակցություն» և եղբայրակցությամբ արյան վրիժառություն։

«Սկյութացիների մեջ,— ասում է Բազիլևիչը,— գոյություն ուներ արյան վրիժառությունը, որը խիստ բնորոշ է պատրիարխալ տոհմային կարգերի ասպիճանում ապրող հասարակության համար։ Նույնպիսի նշանակություն ուներ նաև «եղբայրանալու» արարողությունը. այն երկու հոգին, որոնք որոշել էին «եղբայրներ» դառնալ, կարում էին իրենց ձեռքի երակը, մի թասի մեջ խառնում էին իրենց արյունը գինու հետ և խմում էին»[1]։

Դաստաբրակները պարտավոր էին միմյանց նկատմամբ լինել հավատարիմ, նվիրված, մաքուր բարք ունենալ, միմյանցից անբաժան լինել, միմյանց հանդեպ հարգանք ունենալ և, որ գլխավորն է, փոխադարձաբար միմյանց օգնել։

Քրդերի մեջ դաստաբրակությունը ամրացվում էր մեկը մյուսից արյուն խմելու, զենքերը փոխանակելու և զանազան սիմվոլիկ այլ միջոցներով։

[1] Պրոֆ. Կ. Վ. Բազիլևիչ, ՍՍՌՄ պատմություն, Երևան, 1946, էջ 38։

Միմյանց արյուն խմելը, ընդհանրապես նշանակում է արյունակից դառնալ կամ անդամագրվել տոհմին, ցեղին։

Այս ծիսակատարությունը սկզբնական շրջանում ունեցել է ֆիզիոլոգիական նշանակություն այն իմաստով, որ արյուն առնելով մեկից և խմելով՝ տոհմագրված էր համարվում այդ տոհմին, իսկ հետագայում սրբագործվել է կրոնական արարողությամբ, բնապաշտական կուլտով, ուստի ոչ մի կապ չունի քրիստոնեական, զրադաշտական կամ մահմեդական ու այլ կրոնների ծեսերի հետ։

Քրդերի մեջ արգելվում էր դաստաբրակությամբ, «քույր և եղբայր» դարձածների մեջ ամուսնական կապեր ունենալը։

Ինչպես ուրիշ ժողովուրդների, այնպես էլ քրդական կյանքում մենք տեսնում ենք կրոնի ազդեցությունը դաստաբրակության ամրացման վրա։ Մուսուլման քրդերի մեջ դաստաբրակությունն ամրացնելու համար մոլլան կատարում էր որոշ աղոթքներ. դա դեռ քիչ էր, պետք էր տալ նաև խրատ՝ նրանց ամենօրյա բարքերի և հավատարմության համար։

Այդ ծիսակատարությունից հետո դաստաբրակներն արդեն պարտավոր էին լինել անխարդախ, իրենց դաստաբրակության պարտականությունները, այդ թվում նաև արյան վրեժխնդրությունը կատարել անպայմանորեն։

Ապացուցելու համար դաստաբրակությամբ վրիժառության առկայությունն անցյալում քրդերի մեջ, կարելի է բերել նաև ազգագրական, ֆոլկլորային բազմաթիվ նյութեր, որոնց մեջ դրսևորված է վրեժ լուծելու հանգամանքը։

Այս ստեղծագործությունների մեջ գտնում ենք նաև դասակարգային պայքար (երբեմն վրիժառությամբ արտահայտված), միմյանց հանդեպ մարդկանց տածած սերն ու ատելությունը, քաջագործությունն ու վախկոտությունը, ազնվությունն ու խարդախությունը, բարի ցանկությունն ու նախանձը, նախապաշարմունքը, քուրդ ժողովրդի փիլիսոփայական խոհերը։

Այդ նյութերից աչքի են ընկնում «Մամե ու Զինե» պոեմը, «Համզե փահլևան» (հսկա Համզան), «Բզգո» (վախկոտ) հեքիաթները և ֆոլկլորային գեղեցիկ այլ գոհարներ։

Դաստաբրակությունը ցայտուն կերպով արտահայտված է «Մամե և Զինե» սիրային պոեմում։

Պոեմի հերոս՝ Մամե Ալան, Զինեի սիրով տարված, ճանապարհ է ընկնում դեպի Ջզարա Բոտա երկիրը։ Ճանապարհին հանդիպում է Ջզիրի հերոս (Զինեի տեգը) Ղարաթաժդինին, որը հեծած նժույգ ձին հետևում է մի նապաստակի, նապաստակը չի բռնվում։ Մամեն Ղարաթաժդինին օգնելու մտադրությամբ, առանց նրա հետ ծանոթանալու հետևում է նապաստակին, բռնում և հանձնում որսորդին։

Ջզիրի բնակիչների սովորության համաձայն, ոչ ոք իրավունք չուներ մյուսի որսին հետևելու. դա մեծ վիրավորանք էր համարվում որսորդի համար։ Այդ պատճառով հերոսները կռվում են։ Մամեն խփում և ձիուց վայր է գցում Ղարաթաժդինին։ Հետո հաշտվում և դառնում են դաստաբրակներ։ Ղարաթաժդինը խոսք է տալիս նեղ օրերին օգնել դաստաբրակ եղբորը։ Հետագայում, Ղարաթաժդինն օգնում է դաստաբրակ Մամեին և մինչև վերջ հավատարիմ է մնում նրան։ Նույն պոեմի հերոսուհիներից մեկը՝ Ղարաթաժդինի կին Փարի-խաթունը Մամեին հյուրընկալելու ժամանակ խուշկուբրատի է հաստատում նրա հետ և հավատարիմ է մնում։ Այդ տեսակետից հետաքրքիր է «Համզե փահլևան» (հսկա Համզա) հեքիաթը, որի հերոսներից մեկը՝ Անթարը դաստաբրակություն է հաստատում ոչ միայն հսկա Համզայի հետ, այլ մինչև վերջը հավատարիմ է մնում նրան և նրա հետ միասին վրեժ լուծում դևերից։

Այսպիսով, բոլոր քրդերի մեջ արյան վրիժառությունը կատարվում էր նաև դաստաբրակությամբ։ Դաստաբրակությամբ բրաները (եղբայրները) կամ խուշկերը (քույրերը), ըստ սովորության, միմյանց օգնելու, իրենց թշնամուց վրեժ լուծելու, պաշտպանվելու և այլ պարտականություններ կատարելու գործում ունեին համարյա նույն զգացմունքները, ինչ կարող էին ունենալ հարազատ եղբայրներն ու քույրերը։

4. Վրիժառության արտահայտությունը քրդական խաղերի մեջ

Վրիժառության ոգու արտահայտությունը գտնում ենք ռըմլիստանի (նիզակախաղ), հարսանեկան ջրիտախաղ՝ ռոմանի, մանկական բրոի (կտրել) և այլ խաղերի ու պարերի մեջ։

Այս խաղերի մեջ վրիժառությունն արտահայտվում էր երկու ձևով, առաջին՝ երբ վրիժառության նպատակով մեկը վնասում էր ախոյանին, երկրորդ՝ երբ խաղացողները թշնամական ոչ մի միտում չունեին միմյանց հանդեպ։

Ռըմլիստան խաղի ժամանակ մոտ 20 ձիավորներ բաժանվում էին երկու մասի։ Ձիավորների երկու խմբերը նշանակված հրապարակի մի ծայրում կանգնում էին կողք-կողքի։ Սարքարի (հրամանատարի) կարգադրությունից՝ մեկ, երկու, երեք ասելուց հետո, մի խումբ ձիավորներ, քոլոզները թեք դրած[1] փախչում էին. մյուս խումբը հետևում էր նրանց, նիզակներով հարվածում փախչողների քոլոզներին և ընդհակառակը։ Երկու խաղերի ժամանակ սարքարը հաշվում էր ընկած քոլոզների քանակը. երկու խմբերից որի անդամների ընկած քոլոզների քանակը շատ էր լինում, նա հաղթված էր համարվում։

Այս խաղի ժամանակ եթե երկու կողմերն իսկապես թշնամիներ էին, խաղի միջի հալածողները դիտավորյալ կերպով հանում էին նիզակի ծայրին փաթաթած շորեղեն կտորը, կամ թուլացնում այն, որպեսզի ձիարշավի ժամանակ, ճանապարհին կտորն ինքն իրեն վայր ընկնի և ապա վրիժառության հողի վրա խփում էր թշնամուն, վիրավորում կամ սպանում նրան։ Սա արդեն վրիժառության ռեալ ձևերից մեկն էր խարդախ ճանապարհով։ Այս խաղի մեջ վրիժառության ոգին արտահայտվում էր նաև հետևյալ ձևերը հաղթվածները գտնվում էին հալածողների դերում՝ նախքան հալածվողներին հետևելը, նրանք իրենց նիզակները միասին երեք անգամ բարձրացնում և ձիերի աջ կողքին վայր էին իջեցնում, նորից բարձրացնում. դա նշանակում էր, որ պետք է նիզակով երեք անգամ խփել թշնամուն՝ վրեժն առնելու նպատակով, որովհետև նիզակ իջեցնելու և բարձրացնելու ժամանակ հալածողները կրկնում էին հա՞յֆ (վրեժ) բառը։

Քրդական խաղանիզակները շատ քիչ բանով էին տարբերվում ռազմական իսկական նիզակներից. տարբերությունը միայն այն էր, որ իսկական նիզակների ծայրերին ամրացնում էին երկաթե, իսկ խաղանիզակներին՝ եղեգից կամ փայտից շինված ծայրի վրա շոր փաթաթում։ Ընդհանրապես այդ երկու տիպի նիզակներն էլ ահ ու սարսափ էին ազդում մարդկանց վրա։

Ահա թե ինչ է գրում գերմանացի Կարլ Կոխը քրդական մի խումբ նիզակավորների մասին, որոնց նա տեսել էր Էրզրումից Կարս և Անի կատարած իր ճանապարհորդության ժամանակ.

«Երբ մենք գայմակամի մոտ էինք,— ասում է նա,— բակում տեսանք փայլուն և խիստ տարօրինակ շորերով բազ-

[1] Քոլոզը թեք դնելը արիության, հպարտության նշան էր համարվում։

մաթիվ վրիժառու քուրդ հեծյալներ[1]։ Նրանք ունեին լավ ձիեր և ամբողջովին զինված էին։ Բացի մյուս զենքերից նրանք կրում էին նաև նիզակներ՝ 12 ոտնաչափ երկարությամբ և ձիու մազերից մի սև փունջ ծայրերից կախված)[1]։

Հարսանեկան ուրախության ժամանակ նիզակներով և թրերով զինված երկու խումբ ձիավորներ մտնում էին ջրիտախաղի մեջ՝ բալգիե բուկե (հարսի բարձ) փախցնելու համար[2]։

Ջրիտախաղի ժամանակ բալգիե բուկե փախցնելը պատերիարխատի շրջանի վերապրուկն է և ցույց է տալիս քրդերի մեջ գոյություն ունեցող առևանգման երևույթները։

Երրորդը՝ մանկական «բըռ»[3] կոչված խաղն է, որի մեջ վրիժառությունը արտահայտություն է գտել։

Այս խաղը սկսվում է այսպես. մի քանի տղաներ՝ 12—20 հոգի, բաժանվում են երկու խմբի և խաղի հրապարակում իրենց տեղերը գրավում։ Հրապարակի մեջտեղ մի քար են տնկում և քարի շուրջը 10 մետր հեռավորության վրա կլոր գիծ են քաշում։ Տղաների մի խումբ մտնում է գծից ներս. այդ խմբից մեկը, որպես պաշտպան կանգնում է քարի կողքին, իսկ մյուս խումբը կանգնում է գծից դուրս։ Դրսինները ներս են մտնում և ուզում են ոտքով խփել քարին, ներսինները հասնում են դրսիններին և աջ ձեռքով խփում հարձակվողներին. խփելու դեպքում դրսինը ասպարեզից դուրս է գալիս։ Քարին խփելու դեպքում ներսինները հաղթված են համարվում և գծից դուրս են գալիս ու բացականչում,— հա՛յֆ (վրեժ), իսկ եթե ներսինները մինչև վերջ քարը պաշտպանեն և հերթով խփեն իրենց սահմանը մտնողներին ու շարքից հանեն նրանց, հաղթող են համարվում։

---

[1] K. Koch. Die Kaukasischer Länder und Armenien, Leipsig, 1855, p. 203։

[2] Բալգիե բուկե (հարսի բարձ)։ Ըստ սովորության, հարսանիքի վերջին օրը միայն հարսին հանդիսավոր ջրիտախաղով տանում էին փեսայի տունը, իսկ նախքան նրան տուն տանելը, դաշտ էին տանում ման ածելու համար։

Դաշտում սկսվում էր ջրիտախաղը։ Բալգիե բուկեն գտնվում էր ջրիտավորներից մեկի ձեռքում, որն առջևից ընկած, փախչում էր դեպի փեսայի տունը։ Մյուսները հետևում էին նրան՝ բարձը խլելու նպատակով։ Վերջիններս խաղնիզակներով և թրերի մեջքով խփում էին փախցնողին, իսկ երբեմն վրեժառության միտումով սպանում նրան։

Բալգիե բուկեն փեսայի տուն հասցնողը նրա ծնողներից ստանում էր նվերներ։

[3] Բըռ—այս խաղը խաղում են միմիայն տղաները։

Քարը պաշտպանող խմբի երիտասարդները իրավունք ունեն բռունցքով խփել հարձակվողներին։

Երբ խմբերից մեկը տարվում է խաղի մեջ, մյուս խմբի անդամներն ասում են գյո՛րճկ ա՛մ հայֆա խո ճլինն (մենք պետք է վրեժ լուծենք)։

Չորրորդը՝ հարսանեկան ռոմանի պարն է։ Այնթաբի շրջանի եզդիների մեջ, հարսանեկան ուրախության ժամանակ, 10—15 տղամարդիկ շուրջպարի ձևով շարվում էին, աջ ձեռքով բռնած՝ մերկացրած սրերը բարձր պահած սկսում էին պարել։ Դհոլ-զուռնաչիները նվագում էին ռոմանի պարեղանակը։ Պարը սկսվում էր շատ դանդաղ և հետզհետե արագանում։

Պարողները, պարելու ժամանակ երկու քայլ առաջ էին գցում և ապա ետ գալիս։ Կրկին աջ ոտքն առաջ տանելով, բարձրացնում թրերը, ետ գալու միջոցին թրերը պտտեցնում օդի մեջ և սուր ծայրերը խփում գետնին ու արագությամբ բարձրացնում վերև։ Դա նշանակում է խփել և թոցնել թշնամու գլուխը՝ վրեժ լուծելու նպատակով։

Հարսանեկան այս պարն իր բովանդակությամբ նման է ռազմական ռմլիստն խաղին։

1946 թ. օգոստոս ամսվա ընթացքում Թալինի շրջանի քրդաբնակ գյուղերում կատարած էքսպեդիցիոն աշխատանքների ժամանակ ինձ հաջողվեց գրի առնել վրիժառության վերաբերյալ էթնոգրաֆիկ և ֆոլկլորային բազմաթիվ նյութեր, այդ թվում պարեր և խաղեր, որոնց մեջ նույնպես ցայտուն կերպով արտահայտված է վրիժառության ոգին։

Այս տիպի պարերն ու խաղերը տոհմական հասարակության ծնունդ են։

Խաղերի ու պարերի մեջ գոյություն ունեցող վրիժառության ոգու դրսևորումից պետք է կռահել խմբակցական, ցեղային ապրելակերպը։

Այս փաստերը ցույց են տալիս, որ տոհմական հասարակության օրով վրեժն առնվել է ոչ միայն անհատի, այլ մի ամբողջ խմբի, ցեղի կողմից։

5. Խունդայն

Խունդայնը արյան գնի փոխհատուցումն է, փրկանքը։

Ընդհանրապես, ինքնակամ վրիժառությունը թեև հետապնդվում էր և պետական օրենքներով պատժվում, բայց հին կարգե-

ռում, ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Թյուրքիայում ու Պարսկաստանում ինքնակամ ցեղամիջյան վրիժառության և ինքնադատաստանի առաջն առնելու անզոր էին նույնիսկ սահմանված պատժական օրենքները, իսկ Թյուրքիայում և Իրանում այդ օրենքները հաճախ օրինականացնում էին արյան վրեժը, օրինակ, Մահմեդ Բ-ի և Սուլեյման Ա-ի կանոնների մեջ եղած պատժական նմուշները ցույց են տալիս, թե ինչ ստոիճան խստությամբ էին պատժվում այնտեղ հանցանքները։

«Մահմեդի կանոններով օրինականացված էր արյան վրեժը,— ասում է Լեոն։— Արյան գինը որոշվում էր այսպես. 3.000 ասպրը սպանության համար, 1500 ասպրը մի կուրացած աչքի համար, 30 ասպրը գլխի վերքի համար։ Սուլեյմանի կանոնագրքով մահմեդական տղա կամ աղջիկ փախցնողը ներքինացվում էր, իսկ եթե նա երդվում էր, թե ինքն անմեղ է, մեղադրողը ենթարկվում էր մեկ ասպրը տուգանքի։ Անասնամոլության մեջ բռնվածը ենթարկվում էր դատարանում խիստ հանդիմանության և մեկ ասպրը տուգանքի։ Եթե իրար հետ կռվում էին ազնվական կանայք, նրանք ենթարկվում էին 20 ասպրը տուգանքի, իսկ եթե կռվողներն հասարակ դասի կանայք էին, տուգանք սահմանվում էր 2 ասպրը։ Մարգարեի արգելած գինու կամ այլ խմիչքների յուրաքանչյուր բաժակի համար խմողից տուգանք՝ մեկ ասպրը։ Զիջորի, կամ էշ գողանալու համար կտրվում էր գողի ձեռքը։ Սարուկ գողանալու, խանութ կողոպտելու համար՝ կախաղան։

Գյուղի ամբողջ հասարակությունը պատասխանատու էր այն գողությունների և կողոպուտների համար, որոնք կատարվում էին նույն գյուղի սահմաններում, և պարտավոր էր վարձատրել վնասվածներին»[1]։

Պատժական նման օրենքները նախկինում տեսնում ենք բազմաթիվ ժողովուրդների մեջ՝ Եվրոպայում և Ասիայում՝ Պարսկաստանում, օրինակ՝ 15-րդ դարում էլ, ուր բարբարոսական օրենքներն ավելի էին պահպանվել, դատարանը սպանողին հանձնում էր սպանվածի հարազատներին ինքնադատաստանի համար։

«Երբ սպանվում էր մեկը, նրա ժառանգները դիմում էին դատարանին և պահանջում էին արյան վրեժ։ Եվ սպանողը, երբ ապացուցվում էր նրա հանցանքը, հանձնվում էր այդ ժառանգներին, որոնք իրավունք ունեին կամ ներել նրան, ստանալով սպանվածի արյան գինը կամ սպանել նրան ինչպես ուզում են։ Ժառանգները հաճախ հրաժարվում էին դրամական հատուցումից, որպեսզի կարողանան սպանել ոճրագործին, նախապես ենթարկելով նրան դառն տանջանքների։ Այդ սպանությանը մասնակցում էին սպանվածի նույնիսկ փոքրահասակ երեխաները»[1]։

Նախկինում Հայաստանում ապրող քրդական որոշ ցեղերի մեջ (Շկակա, Բայանդուրա, Ջալալիա) մի քանի հանցանքների համար փրկանք վերցնելն այնքան էլ պատվաբեր չէր համարվում, մանավանդ, երբ հարցը վերաբերում էր կնոջ պատվին։ «Արյան փոխարեն պետք է արյուն թափել»[2]։ Այսպես էր նրանց սովորությունը։ Այդ նույն բանը գոյություն է ունեցել նաև բազմաթիվ այլ ժողովուրդների մեջ, օրինակ՝ Սկանդինավյան Տորջանյնի հերոսներից մեկն այսպես է պատասխանում իր որդուն սպանողին, որն ուրիշի միջոցով առաջարկում է նրա որդու արյան փոխարեն դրամ։

«Ես չեմ ուզում իմ դրամապանակի մեջ կրել իմ սպանված որդուն»[3]։

Այս խոսքերից պարզ երևում է, որ արյան փոխհատուցումը նյութականով, Սկանդինավիայում ամոթ է համարվել։

Չնայած այդ ֆանդամանքին, այնուամենայնիվ խունդայնը մեծ դեր էր կատարում քրդերի կյանքում իբրև ցեղամիջյան փոխհարաբերությունները կարգավորելու միջոց։

«Տոհմական կարգերից պարտականություն էր բխում,— ասում է Էնգելսը,— ժառանգելու ինչպես հոր կամ ազգականների բարեկամական, այնպես նաև թշնամական հարաբերությունները. նմանապես և ժառանգվում էր վիրան (вира), այսինքն՝ սպանության կամ խեղելու համար արյան վրեժխնդրության փոխարեն վճարվող դրամական տուգանքը։ Այս դրամական տուգանքը, որ դեռ միայն մի սերունդ առաջ սպեցիֆիկ գերմանական հաստատություն էր համարվում, այժմ ապացուցված է, որ գոյություն ունի

[1] Լեո, Հայոց պատմություն, 3-րդ հատոր, Երևան, 1946, էջ 64—65։

[1] Լեո, Հայոց պատմություն, 3-րդ հատոր, Երևան, 1946, էջ 65—66։

[2] Տուժող կողմը երբեմն դժվար էր հաշտություն կայացնում թշնամի ցեղի կամ ընտանիքի հետ որպեսզի ավելի մեծ փրկանք ստանար թշնամուց։ Օրինակ՝ կնոջ պատիվն արատավորողը հաճախ ստիպված էր լինում տալ 25-ից մինչև 50 ոչխար իբր փրկանք։

[3] М. Ковалевский, Современный обычай и древный закон, Москва, 1886, стр. 56.

հարյուրավոր ժողովուրդների մեջ իբրև տոհմական հասարակարգից բխող արյան վրեժխնդրության մի ընդհանրական մեղմացրած ձևն։

Ուրեմն, արյան վրեժի և նրա փրկանքի սովորությունը գոյություն է ունեցել ոչ միայն գերմանացիների, հույների, սլավոնների, այլև բազմաթիվ այլ ժողովուրդների կյանքում։

Եթե մարդասպանը կամ ծանր հանցանք կատարողը փախչում, անհետանում էր երկար ժամանակով, տուժողները կարող էին նրա ունեցվածքը գրավել։ Այդ նույն սովորությունը գոյություն է ունեցել կովկասյան օսերի մեջ. երբ մարդասպանը փախչում էր, վրիժառուն, եթե ցանկանում էր, կարող էր նրա ունեցվածքն իրեն վերցնել[2]։

Քրդական համարյա բոլոր ցեղերի մեջ, սպանությունից 3—4 ամիս հետո միայն կարելի էր հաշտություն կայացնել։ Հաշտությունը կատարվում էր հետևյալ պայմաններով։

Եթե վրիժառուները լուծել էին իրենց սպանվածի վրեժը՝ սպանելով հակառակորդի ցեղից կամ ընտանիքից մեկն ու մեկին, արդեն վրեժը լուծված էին համարում, իսկ եթե մի ցեղի սպանվածների թիվը ավելի շատ էր, քան մյուսինը, պետք էր ավելի սպանվածների համար փրկանք վճարվեր։

Եթե փոխադարձ համաձայնությամբ առևանգված կնոջ արնակիցներին վճարվում էր փրկանք։

Արյան գինը որոշելու համար մեծ նշանակություն ուներ, թե սպանվածն ով է, անվանի մարդ է, թե՞ ոչ, ցեղապետ է, թե՞ ռամիկ, որովհետև ցեղապետի, աղայի կամ բեկի արյան գինն ավելի շատ էր լինում, քան ռամիկ քրդինը։ Եթե հանցագործության մեջ մեղադրվող անձը երդվում էր, որ ինքը չի կատարել հանցանքը, այդ դեպքում նա արդարացվում էր, որովհետև քրդերի հասկացողությամբ սուտ երդում ուտողը զրկվում էր հանդերձյալ կյանքի արքայությունից։

Վրիժառության խնդիրներն ինքնուրույն կերպով լուծում էր ցեղապետն իր դիվանով (ծերակույտով) միասին. թեև պետական օրգաններն այդ մասին իմանում էին, բայց գրեթե միշտ էլ անուշադիր էին թողնում այդ դեպքերը և ցեղապետին պատասխանատվության չէին կանչում։

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 184։

[2] М. Ковалевский. Современный обычай и древный закон, Москва, 1886, стр. 56.

Եթե եզդի քրդերից որևէ մեկին մեղադրում էին հանցանքի մեջ, ապացուցելու համար, որ ինքը հանցագործ չէ, ծերակույտի ներկայությամբ նա վերցնում էր մերկացրած թուրը և առավոտյան շուտ դիմավորում արևի ծագումը։ Նա շոքում էր Շամսի առաջ և ապա երդվում էր, որ հանցագործն ինքը չէ, այլ նրան զրպարտել են թշնամությամբ և դիմելով Շամսին, ավելացնում՝ «Շամս, եթե այսինչ հանցագործությունը ես եմ արել, թող այս սուրը կտրի

Նկ. 1. Մի խումբ քրդուհիներ Թալինի շրջանի Թելիկ գյուղից

վիզս, իսկ եթե ես չեմ արել, թող կտրի ինձ զրպարտողի վիզը»։

Սպանողը չէր կարող ազատվել սպանվածի ցեղակիցների հետապնդումից, եթե վերջիններն իրենց վրեժը դեռ չէին լուծել, որովհետև քրդերի հասկացողությամբ վրեժ չլուծողը ուե դրնե («այն աշխարհում») խիստ հալածանքի կենթարկվեր սպանվածի հոգու պաշտպան մելիամաիների (պաշտպան ոգիների) կողմից։

Նյութապես վատթար պայմաններում գտնվող չքավոր մարդասպանը անուժ էր սպանվածի արյան գինը վճարել։ Հալածողներից ազատվելու համար նա դիմում էր այլ միջոցի։ Նա իր վրա էր վերցնում սպանվածի բոլոր մեղքերը։ Սակայն այդ կատարվում էր հատուկ ծեսով։

Մարդասպանն իր ցեղակիցների ուղեկցությամբ գնում էր սպանվածի տունը և խնդրում բբբախշինն (ներել) իրեն։

Սպանողն իր ցեղակիցների առաջն ընկած ներկայանում էր սպանվածի տիրոջը ոչ թե իր սովորական շորերով, այլ սպիտակ կտավով կարած պատանքով, ձեռքերում պահած իր զենքերը, կանգնում էր սպանվածի տան շեմքին, խոնարհվում և եթե սպանվածի արնակիցները հաշտվում էին, բոլորը միասին գնում էին գերեզմանատուն։ Այնտեղ հանցագործն իր զենքերը դնում էր սպանվածի գերեզմանի վրա, իսկ երեխա ունեցող մարդասպանն իր հետ տանում էր նաև իր երեխաներից մեկն ու մեկին։ Նա գերեզմանի շուրջը յոթն անգամ պտույտ գալով շարունակ ասում էր. «Մրնտու կուշտի, գունե տա ստուե մրն» (ես քեզ սպանեցի, մեղքդ վիզս), և ապա դառնում սպանվածի տերերին և ցույց տալով իր երեխային ասում էր՝ «ես մեկին սպանեցի, դուք երկուսին սպանեցեք, ուզում եք սպանեցեք, ուզում եք ազատեցեք մեզ»[1]։ Այստեղ հաշտությունն արդեն կայացած էր համարվում. երկու հակառակորդ կողմերը գերեզմանի վրա համբուրվում էին միմյանց հետ և վերադառնում սպանվածի տունը, որտեղ կատարվում էր հացկերույթ ու դրանով վերջանում էր թշնամությունը։

Իսկ եթե հաշտություն չէր կայանում և վրիժառու քուրդը սպանելով հակառակորդին առնում էր իր ցեղակցի արյան վրեժը, նա գնում էր իր սպանված արենակցի գերեզմանի մոտ և կանչում. «Բբբա դրլե տա բահատ բա, մրն հայֆա տա հլանի» (թող քո սիրտը հանգիստ լինի, վրեժդ լուծեցի)։ Այս կանչը քրդերի մեջ կոչվում է գազի։

Մաքսիմ Կովալևսկու վկայությամբ, այս սովորությունը համարյա նույնությամբ գոյություն է ունեցել հին օսերի մեջ։ Նրա ասելով, օսն իր վրեժը լուծելուց հետո շտապում էր արնակցի գերեզմանի վրա և բարձր ձայնով տեղեկացնում նրան. «Դու կարող ես հանգիստ լինել, ես վրեժ լուծեցի քո սպանության համար»[2]։

[1] Յոթն անգամ գերեզմանի շուրջը պտույտ գալը հեթանոսական ծիսակատարությունների մնացուկ է, որ կապ ունի անիմիստական աշխարհահայեցողության հետ. այս սովորության հետքերը պահպանվել են նաև մահմեդական կրոնի մեջ. օրինակ՝ հաջիության բազմաթիվ ծիսակատարություններից ամենաէականը տավաֆն է, այսինքն քեաբեի շուրջը յոթն անգամ պտույտ գալը և «Սև քարը» համբուրելը։

[2] И. Ковалевский, Современный обычай... т. II, стр. 9.

Քրդերի մեջ թշնամիներին հաշտեցնելու գործում մեծ դեր էին խաղում կանայք, մանավանդ պառավները, որոնք մեծ հարգանք էին վայելում ժողովրդի մեջ։

«Վախտա դրին պիրադե, ոո դասակնա» (երբ ասում են պառավ մայրը, արևն է կանգնում) ասում է քրդական խորիմաստ առածը։

Մայրն իր վայելած հարգանքի շնորհիվ մեծ դեր է խաղում



Նկ. 2. Մի խումբ քրդեր Թալինի շրջանի Հակիո գյուղից

ոչ միայն հաշտություն կայացնելու, այլ ցեղամիջյան և ներցեղային բազմաթիվ խնդիրները ծերակույտի հետ միասին լուծելու գործում։

Քրդերի մեջ գլխավորապես սրանք են հաշտություն կայացնելու հիմնական միջոցները, որոնց գործադրման հետևանքով վերանում էին ցեղամիջյան և ներցեղային արյունահեղությունները։

* * *

Սովետական Միության մեջ՝ կոլտնտեսային կարգերի օրով, տնտեսական և քաղաքական նոր պայմաններում հիմնական փոփոխությունների ենթարկվեց քրդերի կյանքն ու կենցաղը։

Քրդական նահապետական գյուղը, ավելի ճիշտ ասած՝ նախկին քոչվորների ամեռանոցները անցել են պատմության գիրկը։ Գյուղերը նոր տեսք են ստացել, նրանք վերակառուցվել և դարձել են սոցիալիստական գյուղեր։ Կառուցվեցին նոր տիպի լուսավոր բնակարաններ, դպրոցական շենքեր, գյուղական, կոլտնտեսային դրասենյակներ, անասուններ պահելու մեծ ու լուսավոր գոմեր և կոլտնտեսային ընդարձակ պահեստներ։ Այդ գյուղերն ստեղծեցին իրենց սոցիալիստական կոլեկտիվ տնտեսությունը, վերացավ գյուղի հետամնացությունը։ Գյուղական արտադրանքը մեքենայացվեց, գյուղն էլեկտրիֆիկացիայի ենթարկվեց։ Այդ նոր կենցաղը, ինչպես նաև գյուղատնտեսական կատարելագործված գործիքները փոխեցին քուրդ գյուղացու հոգեբանությունը։

Սովետական պայմաններում քրդերի միջից վերացան հետամնացության պատկանող բազմաթիվ սովորություններ։ Վերացավ նաև արյան վրիժառությունը, որպես բարբարոսության և կիսաբարբարոսության սովորույթի մնացորդ։

Սովետական կարգերի հաղթանակը մեր երկրում և սրա հետևանքով կոլեկտիվ շինարարությունը քրդական գյուղում մեկ ընդմիշտ վերացրեց աղաների, բեգերի և կուլակների տիրապետությունը, որոնք անցյալում սեփականացնելով լավագույն հողամասերը, արոտավայրերը, ինչպես և ջուրը, շատ հաճախ առաջացնում էին ցեղամիջյան և ներցեղային սուր պայքար։ Այդ պայքարը հաճախ հանգում էր մարդասպանության։

Վերացվեց վրիժառության ամենահիմնական դրդապատճառներից մեկը՝ հողի և ջրի մասնավոր սեփականությունը։

Համայնական սեփականության պայմաններում վերացավ հոտերով անասուններ և այլ ինչք հափշտակելու ձգտումը։

Վերացվեց շահագործող դասակարգը, որն ստեղծված սովորությունները ծառայեցնում էր իր անձնական շահերին, հափշտակումներ կատարելով ուրիշ ցեղերից, իր ցեղի չունևոր մասսային օգտագործում էր իր հափշտակումները պաշտպանելու համար։

Սովետական կարգերում ստեղծվեց քրդական գիր ու գրականություն։ Սովետական երկրում քրդերը ոտք դրին լուսավորության շեմքի վրա։ Վերացվեց խավարամտությունը, որը վրիժառության սովորության պահպանման հիմնական պատճառներից մեկն է հանդիսացել։ Քրդական գյուղերում ստեղծված լուսավորության հիմնարկները՝ դպրոց, գյուղական ակումբ, գրադարան,

կինո և թատրոն, սովետական օրենքների հետ միասին արմատախիլ են արել դարավոր հետամնաց սովորությունները։

Սովետական Միության քրդաբնակ բոլոր վայրերում քուրդ երեխաները հնարավորություն ստացան հաճախել դպրոց, աճել և դաստիարակվել ստալինյան արևի տակ։

Այժմ ստեղծվել է քուրդ ինտելիգենցիա, որը գյուղի պարտիական և կոմերիտական կազմակերպությունների ղեկավարությամբ երկարատև և համառ պայքար է տանում քրդական հին, վնասակար սովորությունների, այդ թվում նաև վրիժառության վերապրուկների դեմ։ Նոր սերունդը դաստիարակվում է կոմունիստական ոգով և ոչ միայն հեռու է կանգնած ավանդական սովորություններից, այլև պայքարում է նրանց դեմ։

Քուրդ աշխատավորները համատարած գրագետ են դարձել։ Կոմունիստական դաստիարակություն ստանալով, նրանք թողել են իրենց խավարամիտ տրադիցիոն սովորությունները։

Բռնի ամուսնության և ղալանով աղջիկ տալու սովորության վերացումը քրդերի միջից, վերացրեց նաև այդ դրդապատճառից առաջ եկող վրիժառությունը։ Քրդուհին, որ անցյալի դաժան պայմաններում գտնվում էր ստրկական վիճակի մեջ, տղամարդուն համահավասար իրավունքներ ստացավ։

Հասարակական նոր հարաբերությունները, սովետական սոցիալիստական կոլեկտիվ կյանքը վերացրին հին համայնքի, տոհմի հասկացությունը և նրա վրիժառության ձևերը։ Ահա այն հիմքերը, որոնց շնորհիվ սովետական կարգերում ապրող քրդերի միջից վերացան արյան վրիժառությունը, մարդասպանությունը, ամենօրյա կռիվները, անհատական և ցեղամիջյան կռիվները, որոնք, սակայն, գրեթե նույնությամբ մնում են սովետական երկրից դուրս ապրող քրդական բազմաթիվ ցեղերի մեջ։

Այժմ քուրդն ամեն մի դեպքում, երբ ինքն իրեն տուժողի դերում է զգում, իբրև իրավահավասար սովետական քաղաքացի, դիմում է սովետական արդարադատության օրենքներին և ստանում լիակատար բավարարություն։

Այժմ սովետական պայծառ արևի տակ մեծացած քուրդ երիտասարդությունը վրեժով է լցվում իր Սովետական Հայրենիքի թշնամիների հանդեպ։

Այսպիսով վրիժառության ոգին ու հասկացողությունը, ինչպես սովետական մյուս ժողովուրդների, այնպես էլ սովետական քուրդ ժողովրդի մեջ նոր որակ է ստացել։ Այն բոլոր ժողովուրդ-

ների աշխատավորության նկատմամբ ինտերնացիոնալ բնույթ ստանալով, նրա մոտ վրիժառությունը դասակարգային պայքարի բնույթ է ընդունել, Սովետական Հայրենիքի թշնամուն ոչնչացնելու վրիժառության է վերածվել, այնպիսի վրիժառության, ինչպիսին Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ գերմանական ֆաշիստական հորդաներին ոչնչացնելու համար կոչ էր անում պարտիզաններին մեր հանճարեղ զորավար՝ ընկեր Ստալինը։

Հայրենական Մեծ պատերազմի օրերին, երբ գերմանա-ֆաշիստական հորդաները ներխուժեցին մեր սրբազան երկիրը, այդ քուրդ երիտասարդները զենք վերցրած գնացին մեր Հայրենիքի ոխերիմ թշնամիների դեմ պայքարելու։

Այդ ժամանակ ընկեր Ստալինը ոգեշնչում և կոչ էր անում պարտիզան-պարտիզանուհիներին՝ «Անողոքաբար վրեժ լուծել գերմանական զավթիչներից մեր կանանց ու երեխաների, մայրերի ու հայրերի, եղբայրների ու քույրերի արյան և արտասուքի համար։ Բոլոր ուժերով օգնել Կարմիր Բանակին՝ հիտլերյան լկտի սարկացնողների դեմ նրա մղած պայքարում»[1]։

Ոչ միայն պարտիզանները, այլև սովետական ողջ ժողովուրդը վրիժառու էր ֆաշիստների նկատմամբ։

Վրիժառության ոգու արտահայտությունը ընդդեմ ֆաշիստների, գտնում ենք նաև քրդական սովետական բանահյուսության մեջ։ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ քուրդ կոլտնտեսականը, դիմելով բանակ գնացող իր որդուն, ասում է.

Գնա, իմ որդի, գնա, քաջ կռվիր,
Հանուն մեր պատվի, մեր ընտանիքի,
Գարշ ֆաշիստներին ջախջախիր, փշրիր,
Եվ քեզ հերոսի անուն վաստակիր։
Հայր Ստալինն է քեզ կռվի կանչում,
Դու էլ մարտիկ ես մեծ Ստալինի[2]։

1944—45 թթ. ֆաշիստական հորդաներին ջախջախելու ժամանակ քուրդ ժողովուրդը ոգեշնչվելով սովետական զինվորների հերոսական սխրագործություններով, անձնվիրությամբ հա-

[1] Ի. Ստալին, Սովետական Միության Հայրենական Մեծ պատերազմի մասին, Երևան, 1945, էջ 172։

[2] Հ. Ջնդի, Ստալինը քուրդ ժողովրդի ստեղծագործության մեջ, Սովետական գրականություն և արվեստ, Երևան, 1949, էջ 137։

նուն սովետական մեծ Հայրենիքի՝ հորինել է ֆաշիստների նկատմամբ վրեժով լի «Ստալինի զինվորներ ենք մենք» երգը։

Ստալինի զինվորներ ենք մենք, օ՜, ջանե ջան,
Ստալինի զավակները՝ քաջ ու արժան,
Ֆաշիստներին ջարդում ենք մենք, օ՜, ջանե ջան,
Զենք ու սրտով մենք իրարից միշտ անբաժան։

Գողի նման մեր հողը մտան ֆաշիստները,
Աչքը տնկած մեր ոսկեհատ ցորեն հացին,
Վրեժ ենք առնում, նա արնաթաթախ ետ է դառնում,
Եվ սեակնած սրտով նստած՝ դառը կոծում։

Ստալինյան զինվոր ենք մենք, օ՜, ջանե ջան,
Ստալինի զավակները՝ քաջ ու արժան,
Ֆաշիստներից վրեժ լուծում, օ՜, ջանե ջան,
Զենքով, հոգով մենք իրարից միշտ անբաժան[1]։

Քուրդ ժողովրդի սրտառուչ երգերից մեկը հորինել է քուրդ կոլտնտեսական Նասիբի Զաթոն, քուրդ ժողովրդի ծոցից դուրս եկած, Ապարանի շրջանի Սանդյառ գյուղի բնակիչ, սովետական տերության տակ մեծացած նախկին ուսուցիչ և Հայրենական Մեծ պատերազմում Սովետական Միության հերոսի կոչման արժանացած Սիրանդով Սամանդի մասին։ Այդ երգի մեջ ևս ֆաշիստների նկատմամբ արտահայտված է քուրդ ժողովրդի սովետական հայրենասիրության վրիժառության ոգին։

Ահա այդ երգը.

Այո, գետերը լճացած էին արյամբ,
Փռված էին դիերը գերմանական,
Սիրելի Սամանդ նաև քո մասնակցությամբ,
Հաղթեցին քաջ գնդերը սովետական։

Թշնամուց վրեժ առաք ձեր ռումբերով,
Կոտորեցիք ֆաշիստներին բազար-հազար։

[1] Ասել է Մրազե Զաթոն, 47 տ., ապրում է Թբիլիսիում, գրի է առնվել 1944 թ. Թբիլիսիում։

Նրանք եկել էին ագըր-սրով[1],
Դուք քաջ հերոսներ, հաղթանակ տարաք։

Առողջ մնաս իգիթը մեր,
Մեր հոգին լինի քեզ նվեր,
Մեր աչքի լույսն ես առատ,
Ազիզ Սամադ, հոտավետ դու վարդ[2]։

Կան ժողովրդական բազմաթիվ այլ ստեղծագործություններ ևս նվիրված մեր առաջնորդներին, ֆաշիզմի դեմ մարտնչած Սովետական Բանակին, հերոսներին, դաշտային աշխատողներին, որոնցով քուրդ ժողովուրդն իր երախտագիտությունն է հայտնում ռուս մեծ ժողովրդին, Սովետական Կառավարության, Լենինի—Ստալինի մեծ պարտիային և անձամբ մեծ առաջնորդ և քուրդ ժողովրդի մեծագույն բարեկամ ընկեր Ստալինին։

А. АВДАЛ

ОБЫЧАЙ КРОВНОЙ МЕСТИ У КУРДОВ И ЛИКВИДАЦИЯ ЕГО ПЕРЕЖИТКОВ В УСЛОВИЯХ СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Резюме

До установления Советской власти в Армении среди курдов широко бытовал обычай кровной мести, которая существовала не только между разными племенами, но и внутри племени, что являлось выражением классовых противоречий.

Вражда между эксплуататорами—начальниками племен—агами, беками, кулаками (далуманда) и трудящимися (курманджи) пораждала кровную месть. Кровная месть у курдов была узаконена обычным правом и освящалась религиозными преданиями.

[1] Ագըր—կրակ։

[2] Պատմել է Արթիկի շրջանի Քարվանսարա գյուղի բնակիչ Նասիբե Ջաթոն, 50 տ., գրի է առնվել 1945 թ. նույն շրջանի Ալագյազ գյուղում։

Для защиты от кровной мести у курдов существовал обычай убежища (малахойкырне).

С целью избежать кровопролития и всевозможных убытков, среди курдов существовал обычай примирения (барשти), по которому кровная месть заменялась откупом—деньгами или ценными предметами. Замена цены крови деньгами и другими предметами известна под названием хундаин (спасение).

В условиях Советской власти коренным образом изменились условия жизни и быта курдов. Переход к оседлой жизни, организация колхозов способствовали к невиданному хозяйственному и культурному росту курдов, уничтожению причин, порождающих кровную месть (брак по принуждению, классовое угнетение и эксплуатация труда, борьба за пастбища, воду, землю и скот и т. д.) исчезновению из быта курдов и обычая кровной мести.